Համո Սահյան

Հորովելը

Իմ մանկությունը վաղուց կորել է,
Վաղուց դարձել է հեքիաթ ու հուշ,
Բայց երբ հնչում է ձեր հորովելը,
Կրկին մանուկ եմ դառնում քնքուշ:

Սրտագին երգերն ինձ միշտ թովել են,
Հրճվանք են տվել ինձ թևավոր,
Բայց նվիրական ձեր հորովելը
Բոլոր երգերից ջինջ է ու խոր:

Ես ամենքի չափ կյանքը գովել եմ
ՈՒ հաշտ եմ ապրել իմ բախտի հետ,
Ա՛խ հայրենաշունչ ձեր հորովելը
Կյանքի չափ քաղցր է և սիրավետ:

Ձեր փառքի համար փույթ չէ մեռնելը,
Իմաստուն հայրեր հայոց երկրի,
Ձեր հորովելը, ձեր հորովելը,
Ձեր հորովելը թող երկարի...